

## ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

---

- ✓ 2011 թ. մայիսի 10-20-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Վարդանյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի պարենային ապահովության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Մ.Խաչատրյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Բերքի կանխատեսում» թեմայով դասընթացին,
- ✓ 2011 թ. մայիսի 11-13-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Առուշանյանը մասնակցել են ք. Աղվերանում կայացած «Մոնիթորինգ և գնահատում» թեմայով սեմինարին,
- ✓ 2011 թ. մայիսի 24-ից հունիսի 3-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «DMFAS 6.0 համակարգ» թեմայով վերապատրաստման դասընթացին,
- ✓ 2011 թ. մայիսի 25-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՌԿԿ «Կովկասյան բարոմետր» ծրագրի շրջանակում 2010թ. կատարված ընտրանքային հետազոտության արդյունքների շնորհանդեսին,
- ✓ 2011 թ. մայիսի 30-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը և վիճագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժնի պետ Ն. Մուշեղյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Վիճակագրական պաստառ» մրցույթին,
- ✓ 2011 թ. հունիսի 2-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Անհավասարություն. կարևոր է այն արդյոք» թեմայով հանդիպմանը,
- ✓ 2011 թ. հունիսի 9-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական

համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը և վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության միջև վարչական հարկային ռեգիստրի և վիճակագրական բիզնես-ռեգիստրի համատեքստում համագործակցության խթանման հնարավորությունները» թեմայով սեմինարին,

- ✓ 2011 թ. հունիսի 14-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Հողերի և անտառների վերաբերյալ տեղեկատվության կառավարման վերաբերյալ աշխատաժողովին,
- ✓ 2011 թ. հունիսի 20-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Զ. Ավոյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ հանրության իրազեկության ելակետային հետազոտության արդյունքների ներկայացմանը,
- ✓ 2011 թ. հունիսի 28-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Զ. Ավոյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) «Համայնքային և տնտեսական զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակում Տավուշի և Վայոց ձորի մարզերի աշխատաշոկիկաների վերաբերյալ աշխատանքային քննարկմանը,
- ✓ 2011 թ. հունիսի 29-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ-ԵՄ համագործակցության առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով ենթակոմիտեի տասներորդ նիստին: